



ԲԱՐՈՑԱԿԱՆ, ԱՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ

ԺԴ. ՅԱՐԻ 1900

Հարկան 10 ֆր. ոսկի — 4 յր. 50 կ.
Վեցամսեայ՝ 6 ֆր. ոսկի — 2 յր. 50 կ.
Մեկ թիւ Վարձէ 1 ֆր. — 50 կ.:

ԹԻԻ 4, ԱԳՐԻ 1


ԱՐՄԱՐԱՆԵՐ

ՄԱՆԵՆԱԳՐԱԿԱՆ

ՆԱԿԱՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՓԱՏԱՑՈՒ ՊԱՏՄՈՒ
ԹՆՈՆ ՎԵՐԱԲՐՆՈՒ

Մասն Առաջին - Վեցերորդ Դպրատնին:

ժԳ



1.

առաջին պատմութիւնն
սկսում է մի յա-
ռաջարանով, որ
ունի՝ Բիւզանդարան
պատմութիւնը խոս-
տաբանութիւն նա-
խագիտելի՝ վերնա-
գիրը: Այդ յառա-
ջաբանին հետեւում
է Գ. Գար. վերնագրերի ցանկը եւ ապա ինքը Գ.
Գար., իրբեւ սկիզբն փ. ի պատմութեան: Այն-
ուհետեւ Գ., Ե. եւ Զ. Գար. եւս ունին վեր-
նագրերի ցանկ՝ նախակարգուած համապատաս-
խանող գաղութիւնից, յայց այլ եւս յատկան
նախագիտելի՝ չունին նրանք, ըստ որում յիշեալ
նախագիտելի՝ իրբեւ յառաջաբան, վերաբե-
րում է չորս գար. եւս միանգամից:

Հետադրերի է այդ նախագիտելին իւր մա-
տերի համաձայնութեան մէջ. նա սկսում է —
'Այս ինչ է ի գաղութիւնս երբորդ պատմու-
թեանցս. ժամանակագիր կանոնը մասնելից եւ առ-
նման Գար.—Խնդիր էրէ, իսկ վերջանում է մի
հատուածով, որի առաջին տողն է — 'Եւ չորս
խոստմանս շրջի շրջի՝ Գար.—Խնդիր յիւրա-
քանչիւր յիւր գլուխս պատուաստելի միջեւ
ի կատարած արդին, Այսպէս նախագիտելու
առաջին եւ վերջին տողերը՝ երկուսն եւս փ
պատմութեան կազմութեան են նայում եւս այնու-
ամենայնիւ տարբերում են իրարից պատմու-
թեան ամբողջութիւնը յիշելով. մէկը նրանցից
վկայում է պատմութիւնը երեք գար. մէջ, իսկ
միւսը — չորս:

Նախագիտելու մէջ մի այլ տեղ ընդհա-
նուր մտքով կարգում ենք. — 'են սորա չորս
մաստանք եւ չորեքին միոյ իրաց յիշատակա-
րանք են, Այստեղ 'չորս մաստանք իմաստը
անտարբեր մտքով կարող է վերաբերուիլ թէ՛
չորս գաղութիւնից կազմուած մի պատմութեան,
եւ թէ՛ մի պատմութեան, որ ունենայ բացի երեք
գար. ից, նաեւ մի նախագիտելու մասն 'ժամա-
նակագիր կանոնը մասնելից, խորագրով: Ուրեմն
'են սորա չորս մաստանք, խօսքերն այն նշանա-
կութիւնն ունին, որ հաշտեցնում են նախագի-
տելու առաջին եւ վերջին տողերի իմաստը
գաղութեանց բանակութեան մասին:

Միւս կողմից, ինչպէս առաջիկայում՝ փ. ի
պատմութեան բնագործ խնդիրը քննելու միջոցին

Հանգամանքներն կը պարզենք, — այստեղ նկատել պէտք է, որ «ժամանակագիր կանոնք մատենից» վերնագիրն իւր արդի գործածութեանց մէջ փոխարինում է եւ գլուխ, եւ գլորութիւն, եւ ցանկ իմաստներին անխտիր կերպով. այդ վերնագիրը զանազան իմաստներով նշանակուած է մերթ ցանկի, մերթ գլորութեան եւ մերթ յատուկ մի գլխի ճակատին, եւ մերթ գլորութեան վերջում իրբեւ վերջարան: Իւր այդ վիճակով «ժամանակագիր կանոնք մատենից» վերնագիրը մի Հակագրութիւն է համըդասուում նախագիտելու ստղին — «ժամանակագիր կանոնք մատենից եւ առ նմին գլորութիւնք երեք», ուր այդ վերնագիրը ոչ գլուխ, ոչ գլորութիւն եւ ոչ ցանկ նշանակելու վիճակ ունի, այլ ընդհանրապէս մի առանձին հասուած է ակնարկում՝ գլորութիւններից ուրոյն եւ նախագոս վիճակի մէջ:

Այսպէս ուրեմն, նախագիտելու մէջ չորս տարբեր կերպ է սահմանուած պատմութեան կազմութիւնը. 1. ժամանակագիր կանոնք մատենից, 2. երեք գլորութիւնք, 3. չորս մատենք եւ 4. չորս գլորութիւնք: Արդ՝ ինչով է պատմաւարարուած այս բոլորը: Ինչու հեղինակը մի փոքրիկ յառաջաբանի մէջ պիտի գործածէր այդքան բազմազան եղանակները, որոնցով արտայայտուած է նոյն եւ մի խնդիրը: Ինչու հեղինակը «երեք գլորութիւն» իմաստը տարբեր նշանակելով, քան «ժամանակագիր կանոնք մատենից» կոչուածը, ապա պիտի գտնուար բոլորը անխտիր «չորս գլորութիւն» կոչէր եւ այլեւս վերագիր կերպով «չորս մատենք» իմաստի տակ ամփոփէր թէ մէկն եւ թէ միւսը:

Հարունակելով գիտել նախագիտելին, տեսնուծ ենք, որ երկու այլ հասուած եւս ունի նա, որոնց մէջ կրկնուած է պատմութեան վերջին սահմանը, բայց մի հետաքրքիր տարբերութեամբ. նրանցից մէկը հաղորդում է միայն Գ.,

1. Կարելի է մի պարզ թուարանակն գործողութիւն կատարել — արդի գլորութեանց թուից հանել նախագիտելի յիշած երեք թիւը (4—3), եւ անցարդ մի գլորութիւնը համարել «ժամանակագիր կանոնք մատենից» կոչուած հասուածը: Այդ վերջինն ապա նոյն գառնէ արդի Գ. գլոր. հետ, այսինքն «ժամանակագիր կանոնք մատենից» եւ առ նմին երեք գլորութիւնք խօսքերը մէկնէ «Գ. գլորութիւն եւ առ նմին Գ. Ե. եւ Զ. գլորութիւն» Այդպէս է գառնէ նաեւ Հ. Բ. Գ. Սարգսեան (Ազգ. Ե. Իւր բազմ. գաղտնիք. էջ 122—3), որից ակայն նոր բան եւս տեսնելուսմ ենք թէ «Խառնաբանութեան նախագիտելից մէջ՝ Գ. գլորութիւնը ժամանակագիր կանոնք մատենից կ'առանձնէ: Այդ ուղղակի զոգորտութիւն է, չկայ մի ձեռագիր, որի մէջ հեղինակը Գ. գլոր. նշանակուածները...

Գ. եւ Ե. գլոր. բովանդակութիւնը եւ գլորածքի վերջին սահմանը նշանակում է ճիշդ Ե. 44՝ այն է վերջին գլուխը, իսկ միւսը յիշում է այդ բոլորը Զ. գլոր. բովանդակութիւնն եւ գլորածքի վերջին սահմանը այս անգամ նշանակուած են Զ. գլոր. վերջին գլուխները: Ահա այդ հասուածները:

Ա.

Այսինքն կարգ առցելոց խառնաբանագիր արտեայ իրաց գործք եւ վարք Գլխի բովանդակիւր եւ յայտարարէս քահայապետաց որդւոց առջեւ Աստուծոյ, եւ թագաւորաց ուղեւորաց աշխարհաց աղաւթներեաց եւ գլորութեանց քահայեանսն ապա քաջ նախորդաց եւ խաղաղութեան եւ պատեալութեան եւ յիշութեան եւ ուրեմն իւր արգարութեան եւ անորեւութեան եւ աստուածապաշտութեան եւ ամբարշտութեան:

Բ.

Խառնաբանագիր արտեայ ի թագաւորութենէն խառնաբանագիր արգաւջ Տրդատոյ Գլխի ի միւս վերջին ժամանակն վառարակայ թագաւորացն Հայոց, եւ ի քահայապետութենէն վերջանայ որդւոց Գրգորի առաջնոյ քահայապետի Գլխի ցայնասիկ ի վերջնսն որք կային գլխաւորք եպիսկոպոսք Հայոց:

Թէ մինչեւ ուր է շարունակում պատմութիւնը, այդ հարցի պատասխանն ըստ առաջին հասուածի է մինչեւ սուրբ քահայայապետների, արշակունի թագաւորների եւ քաջ զորավարների մահը: Բայց պիտի նկատած, որ այդ որոշումը ոսկի մահուան չէ նայում, այլ սուրբ քահայայապետների, արշակունի միապետների, եւ քաջ զորավարների սպառուելուն: Սակայն ինչ իմաստ է վերագրելը, անխտիր է այն, որ այդ սահմանութիւնը միանում են ըստ իմաստի ճիշդ եւ անթերի մի միայն Ե. գլոր. վերջին գլուխներին — 22—32՝ Ներսէսի, 37՝ վերջին Արշակունի միապետի, եւ 44՝ Մանուէլի մահուան նկարագիրներն են: Այն էլ նկատենք, որ առաջին հասուածի սահմանած կետերի մէջ չկայ մէկը, որ Ե. գլոր. չվերաբերում է որեւէ զորավարի մասին յիշատակութիւնը, նոյնպէս որեւէ Արշակունի միապետի մահուան նկարագիրը. այստեղ յիշում են երկու թագաւոր, որոնց մահն իսկ չէ յիշուած: Նոյն կերպ Զ. գլոր. մէջ յիշուած են Ն. Ներսէսի յաղորդները, բայց նրանք սուրբ արք Աստուծոյ չեն կոչուած հեղինակից, այլ ընդհանրապէս ազգահ եւ անուղղայ դնացիք: Նոյն իսկ քահայայապետ չեն կոչուած այլ սոսկ «գլխաւոր եպիսկոպոսաց»:

Այսպէս ուրեմն առաջին հասուածի որոշումից դուրս է մնում Զ. գլոր., որի մէջ պատմութեան է Արշակունեաց իշխանութեան վատթարանալն եւ գլխաւոր կոչուած եպիսկոպոսների ցուցակը. ուստի հարկաւոր էր մի երկրորդ որո-

չու՞նք կցել առաջինն, եւ ահա այդ երկրորդ որոշումը գտնու՞մ ենք երկրորդ հաստատման մէջ. այս երկրորդ որոշումով է, որ Զ. դպր. կարողանա՞ւ է կցուիլ եւ. դպր. ծայրին՝ զկի առաջին հաստատման սահմանման. ըստ երկրորդ հաստատման, պատմութիւնը շարունակու՞մ է մինչեւ թագաւորների վտարելու ժամանակն՝ եւ «մինչեւ ցայնսոսկի վերջինն, որը կային գլխաւոր եպիսկոպոսը Հայոց»:

Սակայն որինակով աւելի պարզ կացուցած պիտի լինենք երկու հաստատմաների տարբեր նշանակութիւնը. եթէ հրատարակուի միայն ա հաստատման եւ նրան հետեւին Գ. Դ. եւ Ե. դպր. միայն, այդպիսի խմբագրութեամբ եւս անվիճելի կը հանդիսանայ փ.ի պատմութեան ամբողջութիւնը. իսկ եթէ ա. հաստատման հետեւին բոլոր չորս դպրութիւնները — այն դէպքում Զ. դպր. ներկայութիւնը չէր կապուիլ: Նախագիտելու՝ այսինքն ա հաստատման հետ. այդ կապն ունեւնալով համար հարկու՞մ որ եւ անպատճառ ք հաստատման ներկայութիւնը:

Այսպէս՝ ամբողջութեամբ տեսնու՞մ ենք, որ երկու կարգի կրկնութիւն ունի նախագիտելին. նախ՝ յիշուած է պատմութեան կազմութիւնը միանգամ երեք, միւս անգամ չորս դպրութեան մէջ. երկրորդ՝ յիշուած է պատմութեան վերջին սահմանը, որ համապատասխանու՞մ է մի անգամ եւ. դպր. միւս անգամ Զ. դպր. վերջին գլուխներին: Այդ կրկնութիւնները զուգարկաբեր են միանու՞մ են. վկայու՞մ թէ՛ նախագիտելու եւ թէ՛ ամբողջ պատմութեան այլայլումն ըստ կազմութեան եւ ըստ բովանդակութեան. ըստ կազմութեան — որովհետեւ այն բաժանմունքը, որ հասակնալի է «ժամանակագիր կանոնը մատենից եւ առ նմին դպրութիւններ երեք, խոսքերից, ներկայ փ.ի պատմութիւնը չունի: Ըստ բովանդակութեան — որովհետեւ ժամանակագիր կանոնը մատենից հաստատածը չկայ դպրութիւնների շարքում եւ նախադաս վիճակով, եւ բացի այդ՝ ընագրի վերջնական սահմանը համապատասխանու՞մ էր Ե. դպր. վերջին գլուխներին, իսկ այժմ այդ սահմանը ընդարձակեցրած է մինչեւ Զ. դպր. վերջին գլուխները»:

Նախորդ եզրակացութիւնից շատ խնդիրներ են ծագու՞մ. որոնք «ժամանակագիր կանոնը

մատենից, հաստատման հետքերը, վերականգնել ընագրի արտաքին կազմութիւնն եւ ներքին բովանդակութիւնը, մեկուսացնել արդի խմբագրութեան մէջ յետսամուտ մասերը, սահմանել այլայլման ժամանակը, գրգռել պայմաններն եւ այլայլման ժամանակակից գրականութիւնն առնչաբար եւն եւն: Բայց այդ բոլորը մենք կը բաժանենք եւ «Նկատողութիւններս», Բ. եւ Գ. մասերի մէջ կը քննենք այդ խնդիրները. իսկ յոյժորոշ ջերմութեամբ պիտի նկարագրենք Զ. դպրութեան յետսամուտ վիճակը միայն:

2.

«Նախագիտելուց յետոյ, ուսմանը Զ. դպր. ինքն է, որ իւր գոյութիւնն ստանալու հարցը թէ՛ ժամանակի եւ թէ՛ եղանակի նկատմամբ՝ հիմքեր է ներկայացնում վճռելու այնպէս, թէ՛ այն կարկատան եւ կցուած է փ.ի պատմութեան ուշ ժամանակի:

Նախ եւս առաջ դիտենք խմբագրական քանի մի անտոգրութիւններ:

Նախակարգուած մի ցանկ եւ ազա պատմութիւնը 16 գլխի բաժանած, ութանգ 12 սուղ էր մէջ — ահա Զ. դպր. արտաքին պատկերը: Ապա ութ սողից կազմուած մի վերնագիր մէկ եւ կէս էջ պատմութեան համար, որը առաջին գլխի մէջ կենդրոնացած է, իրեւ. քաղաքական պատմութիւն: Երկրորդ վերնագիրը այդ մտքով մի հակադասութիւն է առաջին վերնագրին. նա բովանդակու՞մ է միանգամից 12 գլխի բովանդակութիւնը՝ այն է 2—7 եւ 11—15, մինչ առաջին վերնագիրը նայում է միմիայն առաջին գլխին: — Չնայած իւր ընդարձակ բովանդակութեան, այնու ամենայնիւ երկրորդ վերնագիրը տեղաւորուած է երկրորդ գլխի ճակատին, իրեւ. նրան յատուկ: Ահա այդ վերնագիրը. «Եղաքա եպիսկոպոսացն, որ երեւելիք էին յայնմ ժամանակի ր մօտին յաշխարհիմ խորհիմ խորհիմ յերկրին Հայոց որ ընդ Գարսից ձեռագիւն էին», — Բայց նա, որ այս վերնագիրը տեղաւորել է Բ. գլխի ճակատին, նա ինքն էլ նկատել է եւ փորձ է արել ուղղելու իւր սխալը յատկապէս Բ. գլխի համար մի վերնագիր ասեղծելով, որն եւ կցել է ընդհանուր վերնագրին. — «Նախ վասն վարուց Ջալիայ», Ըուստպոյից եզրակացութիւն չենք ուզում անել: Այդպիսի երեւոյթ Զ. դպր. մէջ միակը չէ եւ երկրորդ սրինակն անխնայանի է կացուցանում կցեցումը: Երեւելի եպիսկոպոսների պատմութիւնը 2—7 եւ 11—15 գլուխներ

1 փ.ի պատմութեան խոստարանութեան «ըստ մութն լինելը հիմք առնելով ԱԲ. Գաղաքացեալն նկատել է, թէ խոստարանութիւնը մի երկրորդ գլխի գործ է եւ ոչ թէ բուն հեղինակի (Հանդ. ԱԲ. 98/200ր):

մէջ է, իսկ միջանկեալ 8—10 գլուխները մի անարժան, ագահ եւ ազէտ եպիսկոպոսի պատմութիւնն է, այդ պատճառով՝ ըստ բովանդակութեան, շարքի միջից գուրս են ձուլման հարմար եւ չեն մնում Բ. գլխի ճակատին նկատած ընդհանուր վերնագրի տակ: Բայց այդ երեք գլուխը շարքից գուրս են ձուլման ըստ կազմութեան: 8 գլուխն ունի մի վերնագիր, որ ամփոփում է նաեւ 9 եւ 10 գլուխների բովանդակութիւնը, որ է — Յազազ Գոհանու եւ պիսկոպոսի եւ վարուց նորա եւ ազահութեան սորա, եւ անմասնութեան եւ շարաշուտ խօսիցն եւ գործոցն (== 8), եւ նշանացն, որ յԱստուծոյ ի վերայ նորա եղեն երբեմն (== 9), եթէ որպէս մեղքը հայցեր եւ առնող զագահութիւն ի Թագաւորացն (== 10),: Այս ընդարձակ վերնագիրը, որ՝ համաձայն մեր փակագրերի, պիտի բաժանուած լինէր 8, 9 եւ 10 գլուխների ճակատին, այժմ միայն 8 գլխին է կցուած, իսկ 9 եւ 10 գլուխների համար նշանակուած են, «Յազազ նորին Գոհանու», ձեռով վերնագրեր:

Այս երեւոյթը մանաւանդ՝ արեւելեան եկեղեցութիւնն չի թոյլատրում. պարզ է, որ խմբագրող հաստատների է բաժանել մասնագրական նշխարի ամբողջութիւնը՝ գլուխներ ստանալու նպատակով, եւ այդ ամբողջութեան վերնագիրն ընդօրինակելով հաստատներից առաջինի համար, անգիտաբար անհոգ է գտնուել կամ անտաշարի, վերնագրին եւս բաժանել մասերի եւ տեղադրել համապատասխանող գլուխների ճակատին. բայց նորասեղծ երկու գլխի համար՝ այնուամենայնիւ, վերնագրի կարիք ահանելով, միամտորէն, նրանց վերնագիրը 8 գլխի ճակատին թողնելուց յետոյ, ստեղծել է կրկնաբար «Յազազնորին Գոհանու», ձեռով երկու վերնագիր: Նոյն կերպ գոյացել են նաեւ 2—7 եւ 11—15 գլուխները, եւ նրանց վերնագրերը «Յազազ (այս անուն) եպիսկոպոսին» ձեռով:

Դիտելով ուրեմն գլուխների արտաքին կազմութիւնն իւր արդի վիճակով՝ տեսնում ենք որ 2. դպր. 16 գլուխը չորս մասի է բաժանուում, չորս մասնագրական նշխարից գոյացած նկատելով ամբողջ գլուխութիւնը. 1. 2. 1, 2. 2—7 եւ 11—15, 3. 2. 8—10 եւ 4. 2. 16 — ահա այն բաժանումները, որին համապատասխան են գլուխները նաեւ ըստ բովանդակութեան:

Բայց մասնագրական նշխարի ամբողջութիւնը գլուխների բաժանելու մէջ իսկ ուշադիր չէ եղած խմբագրողը. քերականական ձեւը, որ ամբողջութեան վիճակում ըստ տեղի եւ գործա-

նուած եղել, բաժան մասերի մէջ նոյն ձեւն այսօր անտեղի է ներկայանում. այդպէս է 4 գլխի նախագաւութիւնը. «բայց միայն վասն կրօնիցն հանգրեւոյն զեղեալ կարպն ըստ կրօնիցն Զաւանդ գնային սղաք», 4 գլխի մէջ խօսքը միայն Ասպուրակէսի մասին է եւ այդ պատճառով՝ գործողութիւնն նշանակող խօսքերն եղակի պիտի լինեն, ինչպէս եւ են՝ «Եկաց, առաւորագետցեաց». այդ երկու խօսքից յետոյ մանաւանդ՝ «գնային սղաք», ձեւը պարտ եղբ վերագրել սոսկ անհնազանդ գլուխ կամակորութեան, որ անփոփոխ ընդօրինակել է աղբիւրից այն ինչ որ յարմար էր նրա ամբողջութեան, ուր խօսքը նաեւ Շահակին էր վերաբերում: Իսկ այսօր Շահակի պատմութիւնը նախորդ գլխի մէջ գնելով, եւ այնտեղ լռելով Շահակի պատմութեան մասին — հետեւեալ գլխում Ասպուրակի պատմութեան մէջ Շահակի պատմութիւնը նորից յիշելն է ահա, որ անտեղի է դառնում, «գնային սղաք», ձեւի մէջ:

Գլուխներ ստեղծել, Գլուխութիւն կազմել — այդ բանքն այնքան զօրեղ է եղել խմբագրող մէջ, որ առանց նկատելու, տարբեր աղբիւրներից քաղել է միեւնոյն պատմութիւնն եւ երկու գլուխ է կազմել. օր. Ասպուրակին են նայում միանգամայն 4 եւ 15 գլուխները. աղբիւրը տարբեր լինելն երեւում է նրանից, որ 1. 15 ի մէջ՝ «գնային սղաք», ձեւը դարձել է «գնայր նա», 2. «ամբայիալ, խօսքը ոչ Շահակի եւ Ասպուրակի եւ ոչ իսկ Զաւէնի մասին չէ գործածուած 2—4 գլ. մէջ, ուրեմն յատուկ է հանդիսանում այն աղբիւրին, որից քաղուած է 15 գլ., 3. 15 ի մէջ չէ յիշուած թէ Ասպուրակ Արքայանոսի տոհմից է կամ Մանազկերտից է, ինչպէս այդ յիշուած է 4 գլխի մէջ, 4. 15 ի մէջ Ասպուրակ յիշուած է թոյլ հովիւ, իսկ 4 գլխի մէջ թուլութեան մասին ոչ մի խօսք չկայ, այլ դրա փոխարեն յիշուած է իւրեւ առաջնորդող դրանն խորովում. այդ պաշտօնն իւրեւ նշանակող մարման էր երբեմն Արքայանոս, ըստ Ագաթանգեղոսի պր. ճիւղ:

7 եւ 13 գլուխները նոյնպէս կրկնութիւն են. երկու գլուխներն եւս Բասենց եպիսկոպոսներին են յիշում: Բայց հեղինակ խմբագրողն ունի օրինակներ, որ մի գլխի մէջ երկու անձի մասին միանգամայն է պատմել նա. այդպէս է Ա. գլ. Փաւստոս եւ Զորթ եպիսկոպոսների մասին, այդպէս է 13 գլուխը, ուր Յիւրիկ եւ Մովսէս եպիսկոպոսներն են յիշուած: Արդ՝ այդ սովորութիւնն ունենալուց, յետոյ, մանաւանդ թէ

Բառենի երկու եպիսկոպոսին մի գլխի մէջ յիշելուց յետոյ, նոյն Բառենի երրորդ եպիսկոպոսին մի առանձին Դրդ գլուխն յատկացնելը կամ աղբիւրի տարբերութեան եւ կամ գլուխներ տեղեկութեան փոխարին արդիւնք է հանգիստանում: Այդ մտքով պակաս հետաքրքիր չէ եւ հետեւեալը, միայնակեացնելի պատմութիւնը Զ. դպր. մէջ մեկուսի գիրքով ամփոփուած է 16րդ գլխի մէջ, ուր յիշուած են Գինք եւ իւր աշակերտները: Գյգպիսի խմբագրական վարժուչիքի տէր մի հեղինակ յանկարծ առանձին գլխով, եպիսկոպոսներին պատմութեան շարքում, Զ. դրդ գլխի մէջ պատմում է մի միայնակեացի մասին — Առոստովի: Հասկանալի է, որ մի գրգիւզ պատճառ եղել է այդ բոլորի համար. եւ պատճառն այն է, որ 5 եւ 6րդ գլուխներն իրարից անբաժան մի հաստատեմ էին երբեմն, որը խմբագրողն երկու մասի բաժանելով թողել է իրար մասաւոր վիճակի մէջ էլ:

Կից այդ բոլորին նկատել հարկաւոր է նաեւ, որ Ասպուրակի պատմութեան, Բառենի եպիսկոպոսների եւ միայնակեացների կրկնաբար յիշատակութիւնը մի խելացի հմտութեամբ դաստորոտած են երկրորդ ընդհանուր վերնագրի ընդարձակ գլուխներից առաջ եւ յետոյ. այդ հետաւոր գիրքով անցալի է դառնում միեւնոյն անձին, եւ նոյնիմաստ պատմութեան կրկնաբար յիշուելը: Բայց խմբագրողը ստիպուած է եղել հատուածներն իրար մէջ հիւսել, որպէս զի նրանց միութեան հետքն անհետանայ. եթէ նախ երեւելի եպիսկոպոսների պատմութիւնը դաստորդը անընդհատ կերպով եւ ապա թէ՛ Յոհան եպիսկոպոսի պատմութիւնը կորգեր, արդարեւ՝ նիւթի, ոճի եւ շարագրութեան ասարբերութիւնը եւ կազմութիւնն անյայտնի պիտի դարձնէին կցեցումը. դրանից խուսափելու ջանքով ահա՛ խմբագրողը վերցրել է երեւելի եպիսկոպոսների պատմութիւնը, երկու կէտ է արել եւ մէջ տեղում դասել է Յոհան եպիսկոպոսի պատմութիւնը 6 գլուխ նախագագաթ թողնելով եւ 5 կամ 6՝ հաշուած նաեւ. «գլխաւոր արեւշայից» Գինդի պատմութիւնը, յետ դասելով:

Խմբագրական պայմանների շարքում դասում ենք նաեւ հեղինակի սովորական եւ գործածական ձևերը, եւ եղանակները, որոնց հաւտած են նրա գրիչը: Այսպէս առաջին երեք դպրութեան մէջ գլուխների սկսուածքներն ի մի խմբելով, թէ՛ կամենալով մի ընդհանուր կարգաւորութեան ենթարկել, իսկոյն առջին կը զարնէ մի անվիճելի մեծամասնութիւն գլուխների,

որոնք սկսում են ժամանակ արտայայտող որեւէ խօսքով, որ միշտ աննորոշ միայն ունի սակայն — ապա, յայնմ ժամանակի, այնուհետեւ, ի ժաման, իբրեւ, յայնժամ եւ այլն: Նոյն այդ երեւոյթը նկատելի է ամէն մի դպրութեան համար, առանձին առաջ: Այդ ինչդուր Զ. դպր. բացատրութիւն է. 16 գլխից է այն կազմուած եւ նրանցից ինչ գլուխ մի նորաձեւ սկսուածք ունին — «էր», «եւ էր», Այդքանից յետոյ տեսնում ենք, որ առաջին երեք դպրութեան մէջ ընդամենը հարկւր քսան չորս գլխից միայն մի գլուխ համանման սկսուածք ունի: — «Եւ էր մարդպետն Հայր այր շար եւ ծանրաբարոյիչը» (Գ. 14): Այնուհետեւ դիտելով Զ. դպր. «էր» սկսուածք ունեցող գլուխները — այն է՝ 2, 5, 6, 11, 12, 13, 14, 15 — տեսնում ենք որ բոլորը մտնում են առաջին ընդհանուր վերնագրի տակ, բացառապէս՝ երեւելի եպիսկոպոսների պատմութիւնն հարորդող հատուածի մասերն են:

Խմբագրականի է պատկանում եւ վերնագրերի կազմութիւնը. մինչ 1, 2, 8 եւ 16 գլուխներն ընդարձակ վերնագրեր ունին, կազմուած 8, 5 եւ 3 առղբից, մնացած գլուխները մի չորուցամբ կազմութիւն ունին — «Եղբարս (այս անուն) եպիսկոպոսն»: Ինչից է առաջացել այս չորս գէր եւ 12 վտիտ վերնագրերի վիճակը. առաջինը լինելով՝ տեսնում ենք, որ չորս գէր վերնագրերը չորս մասնաբաժան նշխարներից մնացորդներ են, իսկ 12 վտիտ վերնագրերից տասն առաջին ընդհանուր վերնագրի մասն են, եւ երկուսն երկրորդ ընդհանուր վերնագրին: Այդ մեկնութեամբ չորս գէր վերնագրերը յուշարձաններ են չորուցամբ կրկնուող 12 վերնագրերի շարայարութեան մէջ, չորս մասնաբաժան նշխարների իրար կցման:

(Ընդունելի)

ԳՐ. ՏԵՐ. ՊՈՂՈՍԵԱՆ



ԺՈՂՈՎՈՐԴՈՒ ԵՐԱՆՈՒՄ ԿՈՂԿՆՈՒՄ, ՆԻՐԻԹԻ ՊՈՏՄԻՐԻՆԸ ՀԵՏՈՒ ՄԻՋՆԻԿՈՒՄԸ ՄԵՏՆԵՆԴԻՐՈՒՄԸ ԸՍՏ ՀՈՅՈՒԷՏ ՆԻԿ ՄԱԹԻ

(Ընդունելի)

11. Էս եթէ նոր գլուխ մը կը սկսինք՝ այս այն յաւելուածոյ մասանց համար է, որ այսպիսի ընդարձակածաւալ քննադատական երկնորձեանց վերջը գրեթէ անհրաժեշտ են: Նախընթաց վերջին տասներորդ գլխով